

այլեւ հայ քրիստոնեաք, երկրորդ առաւօտուն խեղճ մարդը գնաց մտաւ իւր հայրենական եկեղեցին եւ չորս երկայն տարիներէ վերջ կը լսէր դարձեալ սաղմոսները, շարականները, որ իւր տղայութենէն ի վեր լսած էր, յայտնի է թէ անգրագետ մարդ քիչ բան կը հասկնար, բայց ի՞նչ քաղցր էին նոքա իւր ականջին. ինչչա՞ր անցելոյն յիշատակներ կային ծնողաց, ամուսնոյ եւ զաւակաց այդ աղօթքներուն մէջ: Կրկին եւ կրկին երկրպագութիւն կը կրկներ, հազար անգամներ երեսը կը խաչակնէր:

Հեռուն՝ դռան մօտ կանգնած էր Գրիգոր՝ Վարդանայ թոռը, խեղճ երիտասարդ, իբր թէ ամօթով էր խաչելութեան պատկերին առաջ, իւր վայրկենական ուրացութիւնը խիղճը կը խայթէր, հայրենեաց դռան առջեւ հասած՝ իր պալատին հրդեհը ոչինչ կը համարէր, բայց մայրը, քոյրերը, բայց ընտանիքը, այդ Չաւենը, որոմն այնչափ խնամքը վայելէր էր. ամենքը աչաց առաջէն կ'անցնէին, եւ ասոնցմէ ո՞վ կենդանի պիտի կարենար տեսնէի ո՛ւմ համար պիտի զոռցէին թէ մեռաւ, ո՛ւմ համար թէ գերի գնաց բարբարոսաց:— Իր յիշատակաց համար Արգարու քաղաքն էր այդ, այդ քաղքին մէջ հորենացին մատենադարաններ խառնած էր, այդ եկեղեցոյն մէջ հայ պատմադրաց հայրը պատարագ մատուցէր էր: Եւ քսանմէկ տաբու երիտասարդը, որ արտաքոյ կարգի սրամտութիւն ուներ եւ իւր ժամանակին համար մեծ հմտութիւն, այդ բաները կը յիշէր, կ'աղօթէր եւ երանի կ'ուտար այդ տգետ, բարի կրօնասէր իւր ընկեր շինականին, որ մեծ յոյս ուներ իւր ընտանիքն ու փափուկ զակները տեսնելու: Իսկ ինք չէր դիտէր, որ Ռշտունեաց Ոստանը զինք յիշող մը մնացե՞ր էր...

Դեռ Եդեսիա չի մտած Գրիգոր պատուիրած էր Գագրիկի մարդու չի յայտնել իւր ով լինիլն. նա էլ հաւատարմաբար այս պատուերը պահելով՝ անծանօթ օտարականք իրենց զոյստներու հայկական ձեւ տալով ելան Եդեսիայէ եւ քանի մը ճանապարհորդաց հետ հանգիստ եւ անվտանգ երթալով հասան Ամիդ. առանց դադարելու Հայաստանի այդ սահմանագլխոց վրայ կ'անցնէին Ծոփաց եւ Աղձնեաց գաւառներէն ու կը մտնէին Տարօն՝ ժառանգութիւն Մամիկոնեան մեծ իշխանաց Մուշեղայ եւ Համագասպայ: Գրիգոր՝ որուն սրտին մէջ կասկած մտած էր Սուրենի խորհրդածութիւններէն՝ հօրեղբօրը եւ հօրեղբօր որդւոյն վրայ, դարձեալ խստիւ պատուիրեց Գագրիկի ամենեւին մարդու չի յայտնել իւր ո՞վ լինիլն, եւ այնպէս մտան Մշոյ քաղաքը:

Մուշ Տարոնոյ գլխաւոր քաղաքն էր բլրի մը վրայ շինուած, բաւական ընդարձակ, աթոռանիստ Գրիգորի հօրեղբօր Մամիկոնեան Մուշեղի, որու պալատը ամրացեալ պարսպօք եւ աշտարակօք կը բարձրանար կը տարածուէր